

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ի ՎԱՐՉՈՒԹԵՆԷ ՃԵՄԱՐԱՆԻ

1. Բնութիւնը ընդունելութեան յաշակերտութիւն Ղեմարանի Սայր Լճոռոյս Սրբոյ Լճմիաճնի կատարին մի անգամ և եթ ի տարւոջ և այն աւուրբք ինչ յառաջ քան զսկիզբն ուսումնական տարւոյ:

2. Յանկացողք մտանել յաշակերտութիւն Ղեմարանիս մատուցեն խնդիր յանուն Վեհափառ Վաթուղիկոսին, ոչ անագան քան զմին յուլիս ամսոյ:

3. Ընդ խնդրագրին պարօէ առաջի առնել զվկայագիրս ուսման, բարի վարուց, ծննդեան և մկրտութեան և պատուաստման ծաղկի:

4. Նորեկ աշակերտք և ուսանողք զննին ի բժշկէ Ղեմարանիս, որ և տայ Տեսչին զգրաւոր տեղեկութիւն զառողջութենէ նոցա:

5. Ի դպրոցական դասարանս ընկալեալ լինին առհասարակ ուսեալքն ի վարժարանս և կամ հրահանգեալքն առունին կրթութեամբ, իսկ յառաջին լսարան Ղեմարանիս՝ նոքա միայն, որք ունին վկայ զիր աւարտման դպրոցական դասընթացից:

6. Յետ կանոնաւոր հարցաքննութեան ընկալցին յաշակերտութիւն յամենայն դասարանս Ղեմարանիս. իսկ վասն մտանելոյ յԼռաջին լսարան՝ ենթարկեսցին հարցաքննութեան յայն յամենայն առարկայս՝ զորս կարևոր համարիցի Ուսումնական Խորհուրդն:

Ծանօթութիւն. Վասն մտանելոյ յԳ. դասարան պահանջի անթերի գիտութիւն զասընթացից երկրաւոր եկեղեցական ծխական ուսումնարանաց. իսկ վասն մտանելոյ իմիւս դասարանս աշակերտք պարտին քննիլ ըստ ծրագրի հաստատելոյ ի Վեհափառ Վաթուղիկոսէն, ի պէտս Բեհայան դպրոցաց:

7. Յանկացողք մտանել յԼռաջին լսարան

Ղեմարանիս վկայագրով աւարտման դպրոցական
դասընթացից, վերստին ունին ենթարկիլ հարցա-
քննութեան յամենայն առարկայս, եթէ զի անպարտա-
նշեալ ելէ ի վերայ աստեւել քան զաս դի:

8. Յետ հարցաքննութեան ընկալեալ լիցին ի
շարս աշակերտաց՝ որք արժանաւոր դատիցին յԱւ-
սումնական Խորհրդոյն:

Ծանօթութիւն. Պահանջի՝ զի ընկալեալքն յաշա-
կերտութիւն լիցին ուշիմք, երկարողիք, փափկա-
ձայնք, բարեկազմք և բարեբարոյք:

9. Եթէ դասարան Ղեմարանին ընկալեալ լի-
ցին պատանիք 14—16 ամեայ, և ըստ այսմ հա-
մեմատութեան ի յաջորդ դասարանս:

10. Աշակերտք Ղեմարանի գիշերօթիկք են ա-
մենեքեան, թէ ձրիավարժքն և թէ թոշակատուքն,
որք ստանան զուսումն, սնունդ, հագուստ և զա-
մենայն առողջապահական խնամս:

11. Թիւ ձրիավարժից, որ ի հաշիւ Մայր Ա-
թոռոյս, որոշիւմ ըստ ամէ, ըստ բարեհաճ կար-
գադրութեան յԱհափառ Կաթողիկոսի:

12. Աշակերտեալքն պարտին կանխաւ մատու-
ցանել ի գրաւ՝ յայսկոյս կովկասեանք 50 ռուբլիս,
իսկ եկեալքն յայլոց վիճակաց Ռուսաստանի կամ
ի տար աշխարհաց՝ ռուբլիս 75, որպէս զի հա-
տուցի այդ ի ծախս վերադարձի նոցա ի հայրե-
նիս, ևս և ի գին կորուսեալ և վատնեալ գրենոյ,
հանդերձեղինաց և այլոց իրեղինաց:

13. Իւրաքանչիւր թոշակատու վճարեսցէ ի
տարին ռուբլիս 200, ի կրկին նուագս. ի Սեպտեմ-
բեր և ի Յոնուար ամիսս:

14. Եթէ թոշակատու դք ելցէ կամ արձակիցի
մինչև բոլորեալ ուսումնական կիսամեկին, գրա-
ւական նորա ոչ դարձուցի յետս:

15. Յամառնային արձակուրդս, եթէ ծնողք
կամ բարերարք կամիցին տանել զորդիս իւրեանց
ի հայրենիս, ծախք երթևեկութեանց նոցա լիցին
ի ծնողաց կամ ի բարերարաց: